

**ԸՆԿԱԼ ՔԱՂՅՐՈՒԹԵԱՄԲ
Ն Ա Ր Ե Կ
ԲԱՆ ԺԲ.--ՀԱՏ. Գ**

ST. GREGORY OF NAREG
Մեկնաբանեց

**ԱԼՊԷՐ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2002**

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ա. Գրիգոր Նարեկացին գերազանց հանճարն է Հայ գրականության: "Մատենանոց Բնագրություն" կամ "Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ" մատենանք:

Ա. Գրիգոր Նարեկացին վաղ Միջնադարէն մեզի հասած, այնպիսի պայծառութեամբ մը կը ցոլայ Հայ գիրի և գրքի երկնակամարին վրայ: Այս նոր անունը, որ ապագայ դարերը եւս, ինչպէս անցեալին, պիտի գան խոնարհելու անոր գերագոյն խօսքին, երեւակայութեան, բանաստեղծական վեհագոյն թռիչքին երբ հողեղէն մարդ արարածը կը կանգնեցնէ յաւերժական Աստուծոյ դէմ ու իր մեղապարտ ջունչով կը խօսեցնէ յաւերժական Աստուծոյ հետ:

Մատենանոց Բնագրությունը, ցաւերու մէջ ապրող մարդիկը, դէպի լոյս և կեանք առաջնորդող այն լուսաստղն է որ, մեր ժողովուրդին տառապանքները կը մեղմացնէ, ցաւերը կը թեթեւցնէ և յոյս ու առողջութիւն կը պարգեւէ բոլոր անկեալներուն: Գրիգոր Նարեկացին մաս կը կազմէ Հայ ժողովուրդին հաւատքին և Աստուածասիրութեան:

Պրն. Ալպէո Նորատունկեան որ ընդարձակ և խորիմաստ վաստակի տէր է կրօնական գրականութեան--Աետարաններէն սկսեալ--մեկնաբանելու, վերլուծելու և պարզաբանելու, ձեռք առած է Նարեկացիի "Ընկալ Զաղցրութեամբ" (Բան ԺԲ) աղօթքը, և իսկական Զրիստոնէայի վայել անարատ հոգիով և ձեռնհաս մտածողութեամբ Նարեկացիի մտածումներն ու ապրումները լոյսի կրցած է բերել և ընթերցողին ներկայացնել Ա. Գրիգոր Նարեկացին, այնպէս ինչպէս ան "Ի խորոց սրտի" կը խօսի ընդ Աստուծոյ:

Այս գրքոյկը արգասիքն է աստուածային խօսքով և իմաստութեամբ լիացած հոգիի մը, որ իր ամբողջ կեանքի ընթացքին անվարան ֆալած է այն ճամբէն որ իր պատուէրներով և օրինակներով ցոյց կու տայ Աետարանը: Այս ուղղութեամբ Պրն. Ալպէո Նորատունկեանի խօսքը բիւրեղ նկարագրի մը և Նիւթը լաւապէս ճանչցող հոգիէ մը կը բխի: Կարծէ կանգ առնել և խորհրդածել անոր մտածումներուն և հաստատումներուն վրայ:

**--Գրիգոր Նգրուրեան
Թորոնթօ**

Մ Ո Ւ Տ Ք

Ա. Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» հատորը՝ յօրինուած է 1001-1002-ին, «միանձն հայրերու և բազմաթիւ անապատականներու խնդրանքով»: Ան բաղկացած է 95 (Խօսք է ընդ Աստուծոյ): Նարեկի ողբերգակ և հեծկլտանքով օծուն աղօթագիրքը՝ մեծաւանչ բառերգ է աստուածային լուսապայծառ սրբութեան:

Նարեկի ողբերգակ և հեծկլտանքով օծուն աղօթագիրքը խնդրանք մը և արձագանգ մըն է մարդ էակին առ իր Արարիչ Աստուծոյ: Գրիգոր Նարեկացի Յ.Տ. 951--1003, հայ գրականութեան պատմութեան մէջ նոր դարագլուխ մը բացաւ իր «Ողբերգութեան Մատեան»ով: և տաղերով:

Աստուծոյ *սրբութիւնը* այդ անթափանցելի տարածքն է որ Նարեկացին կը կոչէ *անմերձեանալի*: Ան կը սկսի Աստուծով և մարդը կ'առաջնորդէ կատարելութեան: Որովհետեւ մարդ, տիեզերքի մանրանկարն է ու վերադառնալու է իր Արարչին, ապաշխարութեամբ ու հոգեկան վերածնունդով: Մարդ էակ, ոչ կարելիութիւնը ու ոչ ալ իմացական հասողութիւնը ունի սահմանելու գԱստուած, որովհետեւ Ան անհունօրէն աւելի է մարդկային գիտակցութենէն, Աստուած, Գեր-Գիտակցութիւն է:

Հին Կտակարանը գԱստուած մեծարելու համար հեռացուցած էր գԱյն մարդոցմէ: Նոր Կտակարանի մէջ, Յիսուս, մարդը կը մօտեցնէ Աստուծոյ, յայտնելով Անոր սէրն ու ողորմութիւնը: Ո՛չ թէ Աստուած հեռու է և անմերձեանալի, այլ մարդ ի՛նք հեռացած է իր Արարիչէն: Այնպէս, ինչպէս Անառակ Որդին հեռացաւ զինք սիրող հօրմէն: Նարեկացիի Աստուածը ո՛չ միայն հեռու ըլլալով մէկտեղ մերձեանալի է, հապա մօտեցող, Ինք զինք մատուցանող և վերջնական *ներքն* ջնորհող Աստուած է:

Հաւատքը *ինքնամենադատութիւն* ըլլալու է՝ այսինքն «*Ինքզինքին գալ*»: «Ես»ը փոխանակ ըլլալու հեջտութիւն և փառասիրութիւն, պարտ է ըլլալ ապաշխարութիւն և գղջում: Մարդ էակ առանց Աստուծոյ հետ յարաբերութեան և հաղորդութեան, գոյութիւն չի կրնար ունենալ: Յարաբերիլ Աստուծոյ հետ կարելոր է, սակայն պարտ ենք յարաբերիլ նաեւ *մեր անձին և ինքնութեան* հետ եւս: Առանցիկն չենք կրնար գոյութիւն ունենալ: Ճանչնալ ինքզինք, ապաշխարութեան առաջին քայլն է, որ ինքնամաքութեան և

սրբութեան կ'առաջնորդէ մարդ արարածը, որմէ յետոյ ենթական կը ճանչնայ ինքզինքը, ու կը տեսնէ զԱստուած: Սիրելո՛ւ և ծառայելո՛ւ ճամբան, կատարեալ ըլլալու ուղղին է:

Ուստի, իմ համեստ կարողութեամբ կ'ուզեմ, ի սէր հաւատացեալ ազգակիցներուս, մեկնաբանել՝ Նարեկացիի Բան ԺԲ.- հատ. Գ. **“Ընկալ Բողոքութեամբ”** աղօթքը:

Ա. Նորատունկեան
Յուլիս 17, 2002

Հ Ո Գ Ե Ի Ո Ր

Վրբաս աշխարհը չտեսնե՛ն՝
Երբ որ անցնիմ իր մութ ճամբէն.
Այլ սրբութեան ի՛նչը շողայ
Աշխարհի հոտ չգա՛յ կեանքէս՝
Երբ իր աղբին մէջ քալեմ ես.
Այլ երկնքի բո՛յրը բարի՝
Արտէս խունկի պէս ծաւալի:
Աշխարհի բառ ու գաղափար
Թո՛ղ չլսուին բերնէս պայծառ.
Այլ Աստուծոյ խօսքերը լոյս՝
Նուա՛գն ըլլան միջտ ջրթներուս:
Եւ կիրքերուն տեղ ատելի՝
Մէջքս տեսնեն սէ՛րն Յիսուսի,
Որ կենցաղէս չա՛յրքս ճանչնան
Եւ զիս՝ լոյսի որդի՛ արժան:
Ձիս չպղծէ՛ մուրն աշխարհի՝
Երբ իր մեղքի՛ն հոգիս քսուի,
Եւ չխանձի՛ սիրտս իր բոցէն.
Այլ ե՛ս՝ կեանքի վրբայ ամէն՝
Հե՛տքս Թողում աղամանդի...

--ՃԱԳ Ա. ՅԱԿՈԲԵԱՆ

ԸՆԿԱԼ ՔԱՂՅՐՈՒԹԵԱՄԲ

Ն Ա Ր Ե Կ

ԲԱՆ ԺԲ.--ՀԱՏ. Գ

*“Ընկալ Բաղքութեամբ,
Միրով ընդունէ՛”:*

Ի՞նչ փառք ու փրկութիւն, բռնել ու ջթողով աստուածային բարերար Ձեռքը, այդ հրաշագործ ու ամենասուրբ Ձեռքը, որ գլխաւորապէս կու տայ ու կը մոռնայ, կը փրկէ ու կը գոհանայ, կը նախատուի ու կը ներէ, և ցոյց տրուած ապերախութիւններու հակառակ՝ չի գրկեր մեզ Իր աստուածային ջնորհներէն ու պաշտպանութենէն: Հարկ է որ հաղորդուինք աստուածային այդ Ոգիին, և ըլլանք արժանաւոր որդիները մեր նախահայրերուն ու հաւատարիմ ծառաները մեր երկնաւոր Հօր: Քրիստոս այնքան սիրեց մարդը, որ իջնելով զօրութեան կան բարձունքներէ ոչ միայն մարմին եղաւ, այլ լուաց նաեւ Իր աշակերտներուն ոտները, նոյնիսկ Յուդային ոտները, և այսպիսով եղաւ բացառիկ կենդանի օրինակը սիրոյ և խոնարհութեան:

Ըաղցրաբարոյ, հաւասարակշռեալ և բարեհամբոյր բառերը կը բացատրուին հետեւեալ կերպով.

1. “Մեր ունեցողը համբերատար կ’ըլլայ և Բաղքաբարոյ:
2. Բարկութեամբ չի գրգռուիր:
3. Մեր ունեցողը միջոտ կը զիջի ... միջոտ կը համբերէ:

Յիսուսի Մարդեղութիւնը՝ խորհրդագրաց յայտնագրութիւնն է անհննելի Հօր Աստուծոյ Բաղքահայեաց ու խորածածուկ խորհուրդին: Յիսուս Քրիստոսի նկարագրին Բաղքութիւնը, ցոլացումն է Հօր Աստուծոյ հոգւոյն խորաթափանց պայծարութեան և բարութեան:

«Միրով ընդունէ՛» աղերս բառերը, ապաշխարողի մը զոջումը կը յայտնեն, ու ո՛չ մեղաւորի մը կասկածը: Որովհետեւ Աստուած Որդին ըսաւ համա՛յն մարդկութեան.

**«Եկէ՛ք Ինձի, բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ,
և ես պիտի հանգստացնեմ ձեզ»:**

Մատթ. ԺԱ. 28:

“Հօօր Տէր Աստուած”,

Մարդ արարած, ընդհանրապէս կը խոնարհի զօրութեան առջեւ, հարստութեան առաջ կամ անազնագօր մահուան դիմաց: Հաւատացեալը երբ կ'աղօթէ, ան կ'աղերսէ անձնաւորեալ ու բարեգործ հօօր Աստուծոյ: Բրիստոնեային Աստուածը մտացածին կուով մը չէ՛, անօրէնութեամբ բազմացած հարստութիւն մը չէ՛, այլ մեր Փրկիչը՝ Բրիստոսի՛ յայտնացուցուցած Հա՛յր Երկնաւորն է:

Մարիամ Մագդաղենացին, իր մեղքերը խոստովանելու համար, չգնաց Բահանայապետին, չխոնարհեցաւ կրօնաւորի մը առաջ, այլ ծնրադրեց Նազովրեցի Մարգարէի մը ոտքերուն, որովհետեւ միայն Յիսուս Մարդեղեալի՛ն մէջ տեսաւ սիրոյ և ողորմութեան հօօրութիւնը: Յիսուս Բրիստոսի Յարութիւնը երեւոյթ մը չէր, գաղափարական տեսութիւն մը չէր հոգեհմայական ցնորք, կամ երեւակայական մտաբերութիւն մը չէր, այլ առաքելական եկեղեցւոյ անխոցելի զօրութիւնը և անսպառ ուժ-կորովը: Կեանքի իսկական գեղեցկութիւնն ու զօրութիւնը *սիրելու*՝ հրաշագործ արտայայտութեան մէջ կը կայանայ:

“Ինծի պէս դառնացածին աղաչանք”.

Դառնութիւնը վարակիչ հիւանդութեան նման կը ցցուի ամենուրեք և իր սոսկալի աւերը կը գործէ իր զայրոյթով, յուսախարութիւններով ու մեղանչումներով:

Խոոված ես մադոցմէ, դառնացած ես բարեկամներուդ դէմ, Դառն տրամադրութեա՞ն ենթարկուած ես, վշտացած ես անցեալէն ու զայրացած: Նայէ՛ իաչեալ Յիսուսին՝ մարդաշխարհի Փրկիչին, որ նոյնիսկ տառապանքի ու ցաւի մէջ, ներում ու թողութիւն խնդրեց իր թշնամիներուն համար, ըսելով.

«Հա՛յր, ներէ՛ առոնց, որովհետեւ չես գիտեր թէ ինչ կ'ընեն»:

Բրիստոնեան կանչուած է Յիսուսի աջակերտութեան, փոխակերպելու համար Դառնութիւնը լուսաջինութեան, ցաւը՝ կորովի՛ և ընդվզումը՝ ստեղծագործութեան: Պօղոս առաքելին պատուէրն է, ան կ'ըսէ.

«Անէն դառնութիւն և, բարկութիւն և, զայրոյթ, աղաղակ և հայրնոյութիւն և, ակբողջ չարութեամբ հանդերձ, թող վերնայ ձեզմէ: Իրարու հետ եղէ՛ք Բաղք, գլխած, ներելով մէկզմէկու, ինչպէս Աստուած ներեց մեզի Բրիստոսով»

**“Գթութեամբ մօտեցի՛ր ամօթահարիս,
Ո՛վ Ամենապարզեւ”**

Ամօթի և ամչնալու զգացումը մարդո՛ւ տրուած է, ո՛չ անսուսներու: Արդի քաղաքակրթութիւնը, փոխանակ մեղքը արհամարհելու և այպանելու՝ կ’արհամարհէ ամօթի զգացումը և կը մեղադրէ զգաստութիւնը: Որոշ գիտնականներ հագուստի յարաջացման պատճառները կը համարեն ամօթի զգացումը:

Ամօթը, ամբարոյութիւն ըլլալէ աւելի բուժում է, ամբարոյութիւնը՝ *անամօթութիւնն* է: Մերկութեան անհաճոյ զգացումները ենթակային զգացումները կը վիրաւորեն, իսկ վայելչութեան ողջախոհութիւնը, Աստուծոյ ներկայութիւնը կը փաստէ:

“Բարի Սամարացիի”ն առակին մէջ, Յիսուս կը սորվեցնէ թէ ի՞նչ է գթալ, ու կ’ըսէ Փարիսեցիին.

«Ըստ քեզի, այդ երեմէն ո՞րն է աւազակներու ձեռքը ինկածին ընկերը». Եւ ան ըսաւ. «Ան՝ որ գթաց անոր վրայ»: Յիսուս ըսաւ անոր. *«Գնա՛ ու նոյն ձեռով ըրէ՛ և դու նա»*: Ո՛չ թէ անոր գթութեան միայն **հաւատա՛**, այլ **ըրէ՛ և դուն**:

Եթէ սիրենք մեր թշնամին՝ իր հոգին մեզի աւելի յստակ պիտի ըլլայ և որքան աւելի թափանցենք անոր մէջ, այնքան աւելի պիտի տեսնենք թէ իրաւունք ունի մեր գութին և մեր սիրոյն: Մերը սիրուողը թափանցիկ կ’ընէ, սիրելով թշնամին կը մաքրենք գիտակցութեան մէջ մեր ոգին: Մարդը իրապէս մարդ է երբ իր մէջ կը ծնի աստուածային գութը: Նարեկացին Աստուծոյ վերագրած է երկու առանձնայատկութիւններ՝ **արդարադատութիւն** և **գթասրտութիւն**: Յիսուսի Աւետարանին մէջ, Ողորմութեան վերջնական ձեւը **գթութիւնն** է:

«Արդարութեամբ մի՛ դատեր, այլ Զու գթութեամբդ ներէ»:

Կեանքի մէջ իսկական մեծութիւնը՝ այն մահկանացու մարդն է, որուն սիրտը կը գործէ գթութեան և զոհողութեան բարախումներով: Գթութեան և սիրոյ գաղափարով եկեղեցին կապուեցաւ իր ջրջապատին և աշխարհի: Աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնը ուղղել է մարդը մարդասիրութեան և գթութեան:

“Փարտաէ՛ պատկառանքի տխրութիւններս”

Տխրութիւնը հոգւոյ ընկճուած տրամադրութիւնն է՝ թախիծ, լքուածութիւն և յուսահատութիւն: Երաժշտութիւնը արտացոլացումն է զգացումներու, որոնք մեզի կը ներկայանան որպէս ուրախ և վեհ ապրումներ: Մոյն պատճառներու համար, Սուրբ Պատարագը

երածջուկթեամբ և երգով կը կատարուի: Ա. Պատարագին միակ թերուկները, արարողութեան պահուն, անոր հասկնալի չըլլալն է ու չբացատրուիլը, պատարագող բահանային կողմէ:

Կ'ուզե՞ս փարատել պատկառանքի տխրութիւնդ, հոգեւոր երգ երգէ: Երգասացութիւնը մերթ ուրախ, մերթ հեզաստի է առուակի նման, մերթ յորդահոս գետի ու մերթ կը հասնի աստղերուն: Զրիստոնեայ ըլլալ և տխուր ըլլալ հակադրութիւն մըն է ինքնին:

***Վերցո՛ւր վրայէս, ո՛վ Ողորմած,
Անտանելի ծանրութիւններս՝***

Մարդ արարած կը դեգերի, կը թափառի ու վերջապէս կը գտնէ զԱստուած ու կը կոչէ զԱյն ***“Ողորմած՝***՝ Մարդ, Աստուած գտնելէ յետո՛յ միայն կը դադրի թափառելէ: Մարդու ճակատագրուած է երկու տեսակ ծանրութիւն:

1. Մատանային փորձութիւններն ու փոթորկալից փորձանքները:
2. Ան կը փախչի պատասխանատուութեան ծանրութենէն:

Հաւատացեալին ազատարար Փրկիչը Յիսուս, կանխած է Իր ոգեկա՛ն ներկայութեամբ ու կը զանգէ իւրաքանչիւրին սրտի դուռը ու կ'ըսէ.

«Եկէ՛ք Ինձի, բոլոր յոգնածներ և բեռնաւորուածներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ: Իմ լուծս ձեր վրայ առե՛ք և ստրկեցե՛ք Ինձմէ, որ հեզ եմ և սրտով խոնարհ. և ձեր անէծքու ն հանգիստ պիտի գտնե՛ք, որովհետեւ Իմ լուծս բաղցր է և Իմ բեռս թեթեալ»:

Մարդու ունեցած պատասխանատուութիւնը, ոչ թէ ծանր բեռ նկատուելու է, այլ առանձնաջնորհ: Ի՞նչ էր "տաղանդը" Յիսուսի մտին մէջ երբ Ան բաժնեց 10, 5, և 1 տաղանդը իր ծառաներուն: Ի՞նչ է այդ դրամագլուխը զոր Աստուած կու տայ ամէն մարդու, և որու համար մարդ պատասխանատու է արդիւնաւորել զայն օգտակար կերպով: Այդ տաղանդը Աստուծոյ ***քնորհի՛ն*** է, որ անխտիր կը սրուի բոլոր մարդոց, որպէսզի անոնք կարենան վերագտնել Աստուծոյ պատկերը, աճիլ, զարգանալ և օգտակար կեանք մը վարել:

***“Ատրի առ՛ւր, ո՛վ Մշտաշողթ,
Խաբող գրգանքները՝***

"Խաբող գրգանքներ" կը նշանակեն մարմնական ցանկութիւններ: Յանկալը՝ տարի՛հի, զբաղումի, և ընկերային վիճակի հետ աղերս չունի:

1. Պատանին նախանձի աչքով կը դիտէ իր ընկերը:

2. Առեւտրականը և արուեստագետը նախանձուս զգացումներով կը դիտեն իրենց մրցակիցները:

Մամուլ և հեռատեսիլ, որոնք մերկ, գունեղ, ցանկայարոյց, ստորին կիրքեր շոյող ցուցումներով երիտասարդները կը մղեն հաճոյքի և արտաամուսնական յղիանքներու: «Մեղքը կը բնակի մարդու կամքին մէջ, ոչ աշխարհի և ոչ բնութեան», կ'ըսէ Ա. Օգոստինոս: Մեղանչումը՝ մարդու կամքին գերագոյն յագեցումն է՝ «ես»ին յաղթանակը: «ես»ը պիտի նուիրես Աստուծոյ կամ բու ցանկութեան իրագործումին:

Սուրբ Գրային հերոսներն իսկ, գերծ չէին ցանկութեան ախտէն: Ձի բաւեր դեւ հանել դիւահարէ մը, եթէ հանած չես զայն բու մէջէդ՝ հպարտութիւն, վրէժխնդրութիւն և ցանկութիւն: Յակոբոս Տառնետրայր կը գրէ բոլոր դարու հաւատացեալներուն, ըսելով.

«Յանկութիւնը յղանալով՝ մեղք կը ծնի, և մեղքը՝ հասուննալով՝ կը ծնի մահ»--Յակ.Ա.15

«Այն ինչ, որ կը կոչուի Արեւմտեան Աշակոյթ (թերեւս աւելի լաւ պիտի ըլլար կոչել զայն կեղծ-մշակոյթ), յոյժ աւերիչ ազդեցութիւն ունի նոր սերունդին վրայ, գլխաւորաբար այն պատճառով որ ամբողջ շեշտը կը դնէ լոկ հեշտանքի, զգայարաններու ցանկութեանց յագեցման վրայ, որ կը սպառնայ հոգեկան ու իմացական գեղեցկութիւններէ դատարկացնելու անհատին կեանքը:

«Այն ինչ, որ կը հրամցուի որպէս արդիական երաժշտութիւն, կամ կենցաղային վարմունքի այսպէս կոչեցեալ արդիական ու "ազատագրեալ" ընթացքը, ունի երիտասարդութիւնը գերող ազդեցութիւն, որ միաժամանակ սպառողական հասարակութեան լարած ծուղակներէն մին է»--Գարեգին Ա. Կաթողիկոս:

‘ Հեռացո՛ւր ինձմէ, ո՛վ Հնարաւոր, մահացու մղումները’.

Մարդու կամքը ազատ է, ի՛նք պէտք է խուսափի մահացու մղումներէն և ձգտի դէպի Բարին: Մարդիկ իրենց շնորհները կը կորսնցնեն, որովհետեւ իրենք իրենց կարողութենէն վեր գործերու կը ձգտին առանց նկատելու իրենց կարողութեան չափը: Զգացական վայելքները (մահացու մղումները)՝ գեխութիւնն ու անամօթ անբարոյականութիւնը սպաննեց արուեստի և Բաղաբակրթութեան մայր Աթէնքի ստեղծագործող զօրութիւնը: Այսօր կը ծափահար-

Լին ածան ամբոխավարներ կամ զգացական հաճոյքները:

***Հոն ուր մարմնակներ կը տիրապետէ,
տրամաբանութիւնը կը նահանջէ:***

Մտածող, զգացող, որոնող հոգին կը հարցնէ. "ինչո՞ւ կ'ապրիմ, ո՞ւր կ'երթամ, ի՞նչ է կեանքի էութիւնն ու նպատակը": Արուեստն ու գիտութիւնը պատասխան չունին: Պատասխանը կու գայ մեր հաւատէն՝ Աստուծմէ:

1. Տիեզերքը մեռեալ տարր մը չէ, այլ կենսալից ու կենսալիր ներկայութիւնը Աստուծոյ:
2. Տիեզերքը Աստուծո՛յ կենսոլորտն է, ուր Անոր ներկայութիւնը ամէն տեղ է: Հաւատքի՛ աչքը կը տեսնէ զԱյն:

Զգացողութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ հաղորդութիւն ու յարաբերութիւն իր Արարիչին հետ: Նրբերանգներ կան մարդու ներսիդին, որոնք աւելի կը զգացուին քան թէ կ'ապացուցուին:

Հաւատքը անոնց գերազոյնն է:

Կեանքը բարիին պատերազմն է, իսկ բարիին կատարելատիպը Աստուած է: Մարդկային արարածներ իրենց ազատ կամքին պատճառով կը ձգտին կամ չարին և կամ բարիին. նախընտրելին սերն է: Ոմանք կ'ուղուին դէպի կեանք ու ոմանք ալ կորուստ, իրենց նախընտրութեամբ: Աստուած որեւէ կերպով պատասխանատուն չէ և չ'արտօներ բարոյական չարը, մարդ իր ազատ կամքով կ'ընտրէ բարին երբ կ'աղերսէ Աստուծոյ օժանդակութիւնը:

***Վի՛ թողուք, ո՛վ Կեցուցիչ,
որ կորուսիչը վրայ վազէ՞:***

Պետրոս առաքեալ, որ բոլոր աջակերտներէն աւելի բաջութիւն և հաւատարմութիւն յայտնած էր Յիսուս Վարդապետին, թաւալեցաւ ուրացումի փորձութեան ոլորապտոյտին մէջ: Յիսուսի սիրելի այս աջակերտը մեզի կը յորդորէ, որ արթուն ըլլանք ու մենք եւս չթաւալինք դէպի գահավէժ: Ան կը պատուիրէ հաւատացեալներուն, ու կ'ըսէ.

*«Արթո՛ւն կեցե՛ք, հսկեցե՛ք, բանի որ ձեր ոտիքը՝
Սատանան, կը մոնչէ արխածի մը նման, կը ջրջի և
կը փնտռէ թէ զո՛վ կըլէ»--Ա. Պետ. Ե.8:*

Չարը՝ Սատանան ոչ դարձար ունի ու ոչ ալ արձակուրդ կ'առնէ: Իսկ, հաւատացեալ կոչուածներ, կը կարծեն թէ կեանքը զքօսանք է:

Առաքեալը կը պատուիրէ իւրաքանչիւր հաւատացեալին, որ աղօթէ իր "կեցուցիչ" Քրիստոսին, որպէսզի ազատի չարէն:

***Յիր ու ցան ըրէ՛, ով ծածկատես,
Ըմբռնողին ծուղակները՞:***

Ծուղակը իյնալ խորամանկութեան զոհ դառնալ է: Մատանան մուտք կը գործէ մարդկային սիրտը երկու զգացումներէն՝ առաջին երեւակայութիւն, և 2-րդ. մարմնական հեշտասիրութիւն: «Մատանան ինքն ալ լուսաւոր հրեշտակի կերպարանով կը ներկայանայ», ըսած է Պօղոս առաքեալ: Հետեւաբար երբեք տարօրինակ չէ, որ անոր ծառայողները իրենք ալ արդարութեան ծառաներու կերպարանով կը ներկայանան»:

***Անուտո՛վդ տեռռնագրէ՛ երդի՛քիս լուսամուտը,
Չեո՛հովդ պահպանէ՛ սրահիս տոստաղը՞:***

Անունը երկու նշանակութիւն ունի, կոչում և հոչակ: Հեթանոսական ջրջանին, աստուծոյ մը *անունը* կանչել ոչ միայն աստուծութեան նկարագիրը ի մտի ունենալ էր, այլ անոր հաղորդ ըլլալ կը նշանակէր: Յիսուս Քրիստոսի *անունը* աղօթել առ Աստուած, կը նշանակէ՝ Անոր *Հոգիտ՛վը* աղօթել, որպէսզի աղերսարկուն ալ աւելի մեծ զօրութիւն ստանայ: Մոյն իմաստով Յիսուս կ'ըսէ աշակերտներուն. «Ինչ որ ալ Իմ Անունովս խնդրե՛ք Իմ Հօրմէս՝ տայ ձեզի»--Յով. ԺԵ. 16:

Անունի հմայիչ ու դիւթական հզօրութիւնը, նախնիները լազիտէին: Յիսուս Քրիստոսի անուան գործածութիւնը ունի գերբնական զօրութիւն: Պօղոս առաքեալ կը յորդորէ Կողոսացիները, որ աղօթեն Յիսուսի անունով--Գ. 17: Յիսուսի սրբազան անունը զօրութիւն է ինքնին, որուն, հաւատացեալ մը տեղի տալու և յիջելու է:

***Չեո՛հովդ պահպանէ՛ սրահիս տոստաղը,
Արիւնովդ գծագրէ՛ սենեակիս սեմը՞:***

Քրիստոսի Մարմինն ու Արիւնը ճաշակողներուն հոգիներուն մէջ կ'իջնէ ինքն աստուածային ներկայութիւնը զօրացնելու և ներջնչելու ենթական--Յով. Զ. 55-57: Ա. Հաղորդութեամբ, հոգիներու միջեւ համազանգուած միութիւն մը կը ստեղծուի:

Յիսուս Քրիստոսի միակ գծագրութիւնը՝ սուրբ Խաչն է: Հայր երբ "Խաչ" կ'ըսէ, այդ բառին մէջ ականատես կ'ըլլանք Քրիստոսի

կեանքին և Ս. Մարտիրոսներու կեանքին: Նոյն բառին մէջ կը տեսնենք Բրիստոնէական Եկեղեցիին տառապանքը: Խաչին գերագոյն իմաստը Յիսուս ցոյց տուաւ *հրաշագործ Յարութեամբ*:

“Կամբովոյ հովանաւորէ՛ տառապած հոգիս. անվնասելի ըրէ՛ մարմինիս ջնորհած կենդանութեան ծունչդ”.

Յիսուս Բրիստոսի առաքելութիւնը աստուածային սիրոյ գերագոյն արտայայտութիւնն էր հանդէպ տառապակոծ աշխարհի: Հզօրներու քաղաքական մրցակցութեան և հակադիր շահերուն պատճառաւ, աշխարհ դարձած է ցաւի և տառապանքի երկիր: Բրիստոնէան՝ տառապանք տեսած երազներ կորսնցուցած, կարօտի և սիրոյ հուրով այրուած հաւատացեալ մըն է:

Տաւ և տառապանք յաղթահարուելու են, որովհետեւ անոնց ետին և անդին բա՛ն մը գոյութիւն ունենալու է: Եթէ տառապանքէն ու ցաւէն անդին ուրիշ բան չկայ, լաւագոյն բանը անձնապանութիւնն է: Բրիստոսի համար, “տառապիլը”, մարդ արարածը Աստուծոյ վերադարձնել է: Ամենէն հարցասէր միտքը գոհացնող բացատրութիւնները՝ Խաչի՛ն լոյսով կը բանան իրենց դրները: Անո՛նք միայն կրնան սարսուռն գործեր տալ մարդկութեան, որոնք լացած ու տառապած են:

Յիսուսի, աստուածայայտնիչ Աւետարանին մէջ կը զգանք Աստուծոյ ջերմ շունչին յաղորդականութիւնը, հոն կը տեսնենք Յիսուս Բրիստոսի կազդուրիչ աւետիսը և հոգւոյ փրկութիւնը: Աստուածաշունչին միջոցով Հայ ժողովուրդը ոչ միայն Աստուծոյ հետ խօսեցաւ, այլ իր ամենօրեայ ողբերգութիւնը պատմեց ու իր ցաւերը դարմանեց Անոր երկնառաք ծունչով:

“Տեսութեանս պատուհանները, որոնք մտքին զգայարաններն են, այնպէս մը շրջապատէ՛, պարուրէ՛ խօլական ջնորհներէ, որ Զու յոյսիդ յիշատակով պահպանուին անվնաս”:

Յիսուս՝ Իր ամենատես աչքերով գիտեր կարդալ մտքին զգայարանները: Վիշտը կը բանայ մեր աչքերը տեսնելու և համակուելու *ուրիշին* ցաւով: Թոչունը չի կրնար առանց թեւի ճախրել օդին մէջ, մարդը չի կրնար առանց սրբութեան թեւերուն, առանց սրտի ամբօթութեան, թեւածել դէպի սրբութեան բարձունքը, դէպի անմահութեան տաճարը: «Մեր աչքերը յառենք Յիսուսի, մեր հաւատքի Հիմնադիրին ու կատարելագործողին, որ գիտնալով թէ ի՛նչ

ուրախութիւն կը սպասէ իրեն՝ արհամարհեց ամօթը, յանձն առաւ խաչի վրայ մեռնիլը, և Աստուծոյ աթոռին աջ կողմը նստաւ»--Եբր. ԺԲ. 2:

Աջփերու բիբի տեսողութենէն շատ աւելի գեր ի վեր, զօրեղ ու հմայիչ է մտքի լոյսը՝ իմացականութիւնը: «Հաւատքի ճշմարտութիւնը լոյս է մտքի՝ աջփերուն համար»--Ա. Գրիգոր Լուսաւորիչ:

“Որպէսզի երբ ծանր բունէն արթննամ, ամենազգաստ և հոգենորոգ զուարթութեամբ առջեւդ կենցած, ո՛վ անճառելի փառհով ամենօրհնեալ Թագաւոր”,

Մարդկային բարձրագոյն և հզօրագոյն թռիչքն ու ձգտումը եղած է դէպի անմահութիւն: Ինչո՞ւ, որովհետեւ մարդու մահասարսուռ վախը եղած է անծանօթն ու սողոսկող մահը: Սուրբ Նարեկացիի բոլոր խնդրանքն ու աղերսը կեդրոնացած, ամփոփուած ու սեւեռեալ է մարդ արարածի "ծանր բունէն արթննալուն":

Աջխարհի կրօնական գրականութեան մէջ, մի միայն Յիսուս է, որ մահը կոչած է *բուն*: Անպարտելի Յիսուս ո՛չ միայն փոխած է մահուան անունը, այլ ոտնահարած անոր զօրութիւնը ու խորտակած մահուան դուռը: Ազատարար Փրկիչ Յիսուս, Իր հզօր Աջփերը յարած է մահուան հեղինակութեան ու որոտաձայն ըսած:

«Ես եմ Յարութիւնն ու կեանք»

Յիսուս Իր գերահրաշ Յարութեամբ վերածագեցաւ մարդկային պատմութեան թատերաբեմին վրայ: Յիսուսի Յարութեամբ, առաքելները տրամաբանութենէ շատ աւելի հեռուները տեսան՝ անդենականը: Յիսուսի Յարութիւնը լոյսի յարթանակն է խաւարի վրայ, անմահութեան զօրութիւնն է մահուան վրայ, յաւերժական կեանքի իշխանութիւնն է մեռելութեան վրայ, սիրոյ յարթանակն է ատելութեան վրայ, և բարութեան յարթութիւնն է չարութեան վրայ:

Զօրութեան և յարթանակի (Յարութեան) այս անդիմադրելի ուժը չի կրնար յերիւրածոյ, պատրանքային, ինքնախաբէական դէպքի մը արդիւնք ըլլալ աջխարհի բոլոր ազգերուն մէջ: Յարութեան գաղափարին և իրողութեան մեծագոյն, և հզօրաջեջտ ախոյեանը հանդիսացաւ Պօղոս առաքելը: Յարութեան այգալոյսին՝ անցեալն ու ապագան կը գրկախառնուին: Յարութեան խորհուրդէն կը ծնի տեսիլքը յաւիտենական կեանքի: Յիսուսի իւրաքանչիւր խօսքը և բժշկութիւնը, յարութեան լոյսին առաջնորդող ճանապարհ մըն է:

***‘Փառաբանող երկնագումար խումբերու ն երգակցելով՝
կարենամ հաւատի բերումով դէպի երկին՝ Բեզի ուղղել իմ
մաղթանքին ձայնը’:***

Բեթլեհեմի մտւրին մէջ երբ ծնաւ Յիսուս, երգնագեղ հրեշ-
տակներ երգեցին Միածնին ցնծերգու և հոգեպարար Մարդե-
ղութեան համերգը: Մտելոց յարութեան լուսապայծառ առաւօ-
տուն, նահատակներ ու Յիսուսը սիրողներ, պիտի մասնակցին նո՛յն
հրեշտակաց յաղթապա՛նծ համերգին:

Անհամար հաւատացեալներ ու զԱստուած սիրողներ բոլոր
ազգերէ ու լեզուներէ, երբ գունդ առ գունդ յարութիւն առնելով
պիտի կազմեն միացեա՛լ և Ընդհանրական Ա. եկեղեցին, անոնք՝
պիտի որոտան ըսելով.

***«Մ՛ըր է մա՛հ, բու յաղթութիւնդ.
ո՛ւր է դժո՛խք, բու խայթոցդ»:***

***‘Վասնզի Դու ն Բու բոլոր արարածներէդ
փառաւորուած ես յաւիտեանս յաւիտենից. Ամէն’:***

«Պիտի գայ վախճանը, երբ Քրիստոս թագաւորութիւնը պիտի
յանձնէ Հօր Աստուծոյ, ոչնչացնելէ ետք՝ ոգեղէն աշխարհի չար
իշխանութիւնները, պետութիւնները և զօրութիւնները: Որովհետեւ
Քրիստոս պիտի թագաւորէ՝ մինչեւ որ Աստուած բոլոր թշնամիները
անոր ոտներուն տակ դնէ իբրեւ պատուանդան: Վերջին թշնամին
որ պիտի բնաջնջուի՝ Մահը պիտի ըլլայ: Այդպիսով պիտի կա-
տարուի մարգարէութիւնը, թէ "Աստուած ամէն բան անոր ենթար-
կեց": Բայց անշուշտ երբ կ’ըսէ՝ "ամէն բան անոր ենթարկած է",
յստակօրէն կը հասկնանք, "ամէն ինչ" բացի Աստուծմէ, որ ամէն
բան անոր ենթարկեց: Իսկ երբ ամէն բան ենթարկուի Որդիին, այն
ատեն Որդին ալ ինքզինք պիտի ենթարկէ Աստուծոյ, որ ամէն բան
իրեն ենթարկեց, որպէսզի Աստուած ըլլայ ամէն ինչ՝ ամէն բանի
մէջ»--Ա. Կորնթ. ԺԵ. 24-28:

Մարտ 25, 1992

“ՋԻՆՉ ԵՆ ՀԱՒԱՏՔ”

(Ձուկն ու կրիան)

Հաւատքը, յուսացումը բաներու ն հաստատումն է և ապացոյցը այն բաներու ն, որոնք չեն երեւիր --Եբր. ԺԱ. 1

Ձին ժողովուրդը իր հիանալի արուեստագիտութեամբ և մշակոյթի ու ւաւնդութեան ճոխ արտայայտութեամբ՝ ունին իմաստալից երկախօսութիւն ձուկի և կրիայի մը միջեւ: Ձուկը՝ խոր հիացումով կը դիտէ ծովու բուսական և արեւի երփնագեղ ճառագայթները որոնք կը վետվետին ջուրին մէջ՝ մակերեսի ալիքներուն պատճառաւ:

Ձուկը դառնալով կրիային կ'ըսէ, "այս է ճշմարիտ և իրական կեանքը, ցոյց տալով ջուրին մէջ ծփացող արեւի ջողերը, բնութեան գեղեցկութիւնները և ձուկերուն բազմատեսակ գունաւորումները և ձեւերը:

Կրիայ աղբարիկը որ ցարդ համբերած էր ձուկ եղբօր գրոյցին, յաւակնոտութեան և մեծխօսիկութեան, կը հարցնէ իր ընկերոջ ըսելով, "դուն երբեք տեսած ես ծովէն դուրսի աշխարհը": Ընկեր ձուկը կը պատասխանէ թէ, այս ջուրին մէջ տեսնուածը իրականութիւն է, և ինք որպէս *հրապառք* օդային և գաղափարական բաներով չ'զբաղիր: Իր խօսքը կը վերջացնէ ըսելով որ տիեզերք ըսուածը այս տեսնուած ծովն ու բոլոր երեւցածներն են:

Կրիայ աղբարիկը կը ջանայ բացատրել ձուկին թէ ուրիշ տարածութիւն մըն ալ կայ որ նոյնքան իրական է, հոգ չէ որ օդային ըլլայ: "Ես", կ'ըսէ կրիան, "որովհետեւ երկակենցաղ եմ, ջատանգամներ պտտած եմ ջուրէն դուրսի աշխարհին մէջ ալ: Հիացած եմ զմրուխտ դաշտագետիներուն, մայրիի հսկայ ծառերուն, հոն ուր լեռները մինչեւ երկինք կը հասնին: Դուն միայն լոյսին գունագեղ ցոլացումները կը տեսնես հոս, ջուրին մէջ, մինչ ես՝ արեւը կը տեսնեմ ցամաքի վրայէն:

Կրիան կը ջանայ բացատրել ցամաքը, անձրեւը, ձիւնը, կենդանիները և օդին մէջ թռչող թռչունները, սակայն ապարդիւն: Ձուկը կը ջարուսակէ իր անհաւատ յանկերգը, "Ես, օդային բաներու չեմ հաւատար: Իրականն ու տրամաբանականը ա՛յս է, ինչ որ կ'երեւի ջուրին մէջ":

Կրնաք երեւակայել կրիայ աղբարիկին մղձաւանջը որ չի կրնար իր ձուկ ընկերոջ հաւատացնել նոյնքան իրական և ջօշափելի ճշմարտութիւնները որ գոյ են, նաեւ ջուրէն դուրս օդին մէջ:

"Որո՞նց չեն երեւիր" Աւետարանին խօսքերը: Որո՞նք չեն հասկնար Յիսուս պատգամները, անո՞նց որոնք կ'ապրին *միատարած* տեսութեան աշխարհին մէջ: Եւ ան ձուկին՝ որ միայն ջուրի՞ն մէջի իրականութիւնները կրնայ տեսնել:

Այսօր ալ մարդկութիւնը բաժնուած է կրիայի և ձուկի երկու տարբեր տարածութիւններու հասողութեան: Յանուն իրապաշտութեան և բանականութեան, մարդ էակը, յառաջ կը բշէ իր բնահաճ կուրութիւնը և կամայապաշտութիւնը: Իւրաքանչիւր մարդ արարածին ըմբռնումի հասողութիւնը կը տարբերի այնպէս՝ ինչպէս անոր հոտառութիւնը, տեսողութիւնը և մնացեալ զգայութեան գործարանները:

Ինչո՞ւ ըլլալ միայն նիւթապաշտ: Տեսնել միայն ջուրին մէջի իրողութիւնները--մեր անմիջական շրջանակին իրերը--և ուրանալ հոգեկանը--ջուրէն դուրս ցամաքի վրայ--գտնուած իրականութիւններն ու նաեւ ճշմարտութիւնները:

Ինչո՞ւ *բնածիծաղիլ* հոգեւոր և գաղափարական երեւոյթներու, և զանոնք օդային անուանել երբ այդ հոգեւոր և գաղափարական կարծուածները՝ դէպքեր, իրականութիւններ են երկակենցաղ մարդ արարածներու, և ցնորք միայն անոնց՝ որ ձկնանման միակենցաղ են:

Իմաստութիւնը կը պահանջէ բոլոր հետազօտող միտքերէն գիտնա՛լ թէ բոլոր երեւցած բաները, երեւոյթի մը միայն մէկ երեսակն է և ոչ երեւոյթի մը ամբողջական ինքնութիւնը:

Այն տիեզերքը ուր ապրիլ ճակատագրուած ենք, մեր զգայնութիւններուն համար շատ վիթխարի է, և մեր ըմբռնումները շատ սահմանափակ: Վճռականօրէն թերահաւատ ըլլալու չենք այն իրականութիւններուն որոնք շնորհուած են "սրտով մահուրներուն" և "աննենգ սրտով" հաւատացողներուն: Որովհետեւ գաղափարականն ու հոգեւոր երեւոյթներն ու իրողարձութիւններն ալ *նոյննալ* իրականութիւններ են ա՛յն տեսանողներուն, որքան նիւթականը և միակենցաղայինը յաղթահարած են հոգեղէնով:

Բարոյական իրականութիւնները՝ մարդ ո՛չ նիւթէն և ո՛չ ալ բնութենէն կը սորվի, այլ շնորհներ են աստուածային գանձատունէն: Օրինակի համար, *սէր և արդարութիւն* որոնք բարձունքներն են բարոյական կատարին, ինչո՞ւ և ինչպէ՞ս ճանչցուեցան անոնք մարդկային հասողութեան: Բնութեան և նիւթի տարողութենէն անդի՛ն են սիրոյ և արդարութեան ճանաչողութիւնները: Եւ ուր և վեհապանծ տարողութեան սահմանումով կ'ըմբռնուին

անոնք: Ինչո՞ւ չ'ընդունիլ հոգեկան երեւոյթներն ու իրադարձու-
թիւնները և չ'խոնարհիլ Արարիչ Աստուծոյ առջին և թօթափել մեր
սնտոի ունայնաբանութիւնը և դառնալ հաւատացեալ: Ըլլալ
երկակենցաղ նման կրիայ աղբարիկին: Հաւատա՛լ աստուածային
յայտնութիւններուն՝ որոնք կը գերազանցեն նիւթական տրամաբա-
նութիւնը և կը չլսաս որե՛նք բանականութիւնը:

Տրամաբանութիւնը խոնարհ և անմոռնչ հետազօտութիւն մը
ըլլալու է ճշմարտութեան և իրականութեան, ու ո՛չ երբեք յոխորտ
իրաւաբան մը: Ճշմարտութեան և իրականութեան ուսումնասիրու-
թեան ճանապարհին, կը շնորհուի կարգ մը անկեղծ և մաքուր
սիրտերու, տրամաբանութեան օժանդակող հոգեւտեսութիւններ և
երկնային յայտնութիւններ:

Պօղոս Առաքեալ Դամասկոսի ճանապարհի՛ն ստացաւ սոյն
երկնային և հրեղէն հոգեւտես յայտնութիւնը: Դարերու յաւերժին
ընդմէջէն Պօղոս Առաքեալ կ'արձագանգէ հակազդելով անհաւա-
տութեան, ու կ'ըսէ.

***Գիտեմ որո՛ւ եմ հաւատացեր. և վստահ եմ թէ ան կարո՛ղ
է իմ աւանդս պահել մինչեւ այն օրը՝ --Բ. Տիմ. Ա. 12:***

Պօղոս առաքեալի հաւատքը փոխակերպուած է *"գիտեմ"* և
բացարձակ ճանաչողութեան:

Ամերիկայի Նախագահ Րիչըրտ Նիքսըն և իր հաւատարիմ
գործակիցները չկրցին Ուաթըրկէյթի "գավըրափ" սուտը ծածկել
երկու ջարաթ, ու խոստովանեցան: Մինչ Պօղոս Առաքեալ անվեհեր
և անվախ երեսուն տարիներ կրկնեց ու յայտարարեց իր տեսած
յայտնութիւնները և երկնային երեւոյթները բոլոր ժողովուրդներու,
թագաւորներու և իշխաններու դիմաց: Եւ որպէս ճշմարիտ վկայ,
անխախտ հաւատքով, երկնցուց իր պարանոցը քիրտ սուրին: Պօղոս
Առաքեալ՝ Անհունին փարած թէեւ կորսնցուց իր գլուխը, սակայն իր
վկայութիւնները կը ցնծերգեն յաղթանչիւն և յաւիտեան:

Երանելի՛՜ Ս. Պօղոս Առաքեալ:

Սեպտ. 22, 1989